Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (20 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ), ֆիզիկայի (8 դասաժամ), մաթեմատիկայի (11 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (7 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ), տեխնոլոգիայի աղջիկների խումբ (4 դասաժամ) և տղաների խումբ (4 դասաժամ), հայրենագիտության (1 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. հունիսի 1-ից մինչև 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հունիսի 19-ին՝ ժամը 12:00-ին**, Պրիվոլնոյեի մջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Պրիվոլնոյե, 1-ին փ., շ 55: Տեղեկությունների համար զանգահարել 093 663737 հեռախոսահամարով: